**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան | 16.10.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը,
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

**(Մ.Ամիրյան)**

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկություններ բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1 ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

**(Մ.Ամիրյան)**

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Ա-2» ՍՊԸ |
| 2 | «Նիրէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ |
| 3 | Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան» |
| 4 | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ |
| 5 | ԱՁ «Գրիգոր Այվազյան» |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

**(Մ.Ամիրյան)**

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքի.
«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հրավերի Հավելված 1-ի /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն/ իրական շահառուների մասին տվյալների համար նախատեսված աղյուսակի առաջին սյունակում նշված չէր իրական շահառու հանդիսացող անձի հայրանունը, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:
23.10.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների

համակարգողի ծանուցեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /23.10.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեց պահանջվող փաստաթուղթը և գնահատող հանձնաժողովը շարունակեց նիստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**
**(Մ.Ամիրյան)**

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպություններ | | | | 1-ին տեղ զբաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումը | գնային առաջարկը | | | |
| | | | | արժեքը | ԱԱՀ-ն | գինը | |
| 1 | Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն | 67,406 | «Ա-2» ՍՊԸ | 56155 | 11231 | 67386 | «Ա-2» ՍՊԸ |
| 2 | Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 3,831,700 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ | 3448400 | 0 | 3448400 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ |
| 3 | Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 2,955,540 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ | 2659720 | 0 | 2659720 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ |
| 4 | Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 966,240 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ | 867300 | 0 | 867300 | «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ |
| 5 | Խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 812,600 | Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան» | 802600 | 0 | 802600 | Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան» |
| | | | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ | 796400 | 159280 | 955680 | |
| | | | ԱՁ «Գրիգոր Այվազյան» | 812600 | 0 | 812600 | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /այսինքն ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /**ճիշտ են**/:

3.3 24.10.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ **30.10.2019թ. ժամը 14:20-ին** ՀՀ *ՊՆ ՆՏԱԴ ԳՓՔ* վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացնել բանակցություն, իսկ գնումների համակարգողը նույն օրը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց մասնակիցներին՝ կազմակերպվելիք բանակցության վերաբերյալ:

30.10.2019թ. ծանուցված մասնակիցներից բանակցություններին ներկայացավ միայն «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով, սակայն չցանկացավ փոփոխել ներկայացված գնային առաջարկը: Բանակցությունների ավարտից հետո մասնակիցների կողմից ներկայացված գները մնացին անփոփոխ:

Հիմք ընդունելով վերնշյալը ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 5-րդ չափաբաժնի մասով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գինը /955680 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ/ գերազանցում էր տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական միջոցները /812600 ՀՀ դրամ/, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 5-րդ չափաբաժնի մասով մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**
**(Մ.Ամիրյան)**

4.1 01.11.2019թ. հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքերը, հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա ընթացակարգի **1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ա-2» ՍՊԸ**-ն, **2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ**-ն, իսկ **5-րդ չափաբաժնի մասով՝ Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան»**-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**
**(Մ.Ամիրյան)**

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Քվեարկվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**
**(Մ.Ամիրյան)**

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված տեղեկատվության հանձնաժողովի կողմից քննարկվելու վերջնաժամկետի օրը ժամը **17:30**-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում

*Քվեարկվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

| | | |
|---|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | ______ | Ա. Մուրադյան |
| Գնահատող | ______ | Թ. Ստեփանյան |
| Գնահատող | ______ | Ս. Սարգսյան |
| Գնումները համակարգող | ______ | Մ.Ամիրյան |